ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՁԵՂԵԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2013 -- 2017թթ. ՍՈՑԻԱԼ -- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Սուրիկ Սարգսյանը

Քննարկվել է համայնքի.ավագանու 12.02.2013թ թիվ 3-րդ նիստում



2013Թ

# 1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## Աշխարհագրական դիրքը և համառոտ պատմական ակնարկ

Ձեղեա գյուղը վերաբնակեցվել է փախստականներով՝1988 թվականի նոյեմբեր ամսից:Համայնքը գտնվում է մարզկենտրոնից 20 կմ դեպի հյուսիս - արևելք:
Գյուղը ավելի հին է քան ենթադրվում է, որի վկայությունն է զարդաքանդակներով խաչքարերը և հունական տառերով գերեզմանաքարերի արձանագրությունները:
Գյուղը գտնվում է Վարդաբլուր և Հարսնասար լեռների ստորոտում:Ծովի մակ.- ից բարձր է 1600 մ. : Վարդաբլուրի և Հարսնասարի լանջերից բխող աղբյուրներից խմելու ջրով ապահոված է համայնքի 70-ից 80%-ը:Համայնքի կլիման բարեխառն է ,ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը՝ մեղմ և զով: Հաճախակի տարին լինում է չորային և երաշտի , որից տուժում է գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին:

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքու ապրում են 193 բնակիչներ, որից 47%-ը տղամարդիկ են :
Համայնքի բնակիչների թիվը, այդ թվում՝

1. երեխաներ (0—6տ) -- 11
2. դպրոցականներ(7-17տ) -- 40
3. 18- 62տ – 81
4. թոշակառուներ – 10
5. հաշմանդամներ -- 7
6. աշխատունակներ – 70
7. Փախստականներ -- 150
8. Նպաստառուներ --5ընտանիք

Համայնքն ունի 54 ծուխ , զբաղեցրած վարչական տարածքը 2750հա է, աշխատունակ բնակչության թիվը կազմում է մոտ 70 մարդ, գործազուրկներ՝52 մարդ:Հիմնական աշխատանք չունի աշխատունակ բնակչության մոտ 80 % - ը:

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Համայնքը կառավարվում է համայնքի ղեկավարի (գյուղապետի)կողմից ,որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

- աշխատակազմի քարտուղար --- 1դրույք
- հաշվապահ- ֆինանսիստ ----1դրույք
- գլխավոր մասնագետ ----1դրույք

Համայնքի ենթակառույցներն են՝

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով մոտ 90 % - ով:
Չկան խողովակներ ու կիսախողովակներ խմելու ջրի արտաքին ցանցի և ոռոգման ջրագծի վերանորոգման համար:Խմելու ջրի մատակարարումը հաճախ կատարվում է ընդհատումներով `տնտեսական ճգնաժամի և ջրամատակարարման ցանցի մաշվածության պատճառով:Ջրամատակարարումը կատարվում է ինքնահոս եղանակով:

## ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 42 առանձնատուն, 17000 հազ.քմ. տարածքով: Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը կազմում է 30 % - ից ավելի, որը տարեցտարի աճում է:Համայնքի բոլոր առանձնատները վքարային են:Ըստ «Հայսեյսմշին և ԳՀԻ»ՓԲԸ կողմից ուսումնասիրության եզրակացության հիման վրա համայնքի առանձնատները կառուցվել են անցյալ դարի 40 - ական թվականներից : Դրանց հիմնական մասն իրականացված է կավաշաղախով շարված հում կավե աղյուսներով ու խամքարե պատերով:Հետազոտությունների արդյունքում համայնքի առանձնատները գնահատվել են IV կարգի`25,III կարգի`15, II կարգի`2 և մինչ այժմ չեն վերանորոգվել տնտեսական ճգնաժամի պատճառով :

## ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

- Համայնքի վարչական տարածքը --- 2750 հա
- Վարելահող ---323հա
- Խոտհարք ---20հա
- Արոտավայրեր --- 607հա
- Անօգտագործելի հողեր ---1312հա
- Ջրեր ---6.13հա
- Դաշտային ճանապարհներ ---30.2հա
- Արտադրական մաս (կովանոց) ---0.26հա
- Այգիներ --- 70 հա
- Գերեզմանոց ---0.2հա
- Տնամերձ հողեր ---17հա
- Դպրոց ---0.35հա

- Գյուղամիջյան փողոցներ ---1.5 հա
- Սեփականաշնորհված հողեր ---166հա որտեղ
- մեկ հողաբաժնի չափ ---1.97հա
- Հողի սեփականաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը 62
- Բնակավայրի տարածք 9.64 ---հա
- Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական պահուստի հողերը -- 157հա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության ճյուղերը՝

- Անասնապահություն
- Այգեգործություն
- Մեղվաբուծություն

Համայնքն ունի շուրջ 71 գլուխ խոշոր և 154 գլուխ մանր եղջերավոր անասուններ:
Ոռոգման ջրի ներքին ցանց չունենալու պատճառով համայնքի բնակիչները չեն կարողանում մշակել վարելահողերը: Հիմնականում զբաղվում են ցորենի , գարու,առվույտի, կարտոֆիլի և այլ բանջար - բոստանային կուլտուրաների արտադրությամբ:Անձրևային տարիներին որոշ չափով դեռ կարելի է բերք հավաքել, իսկ երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի 70 % -ը:

Անասնապահությամբ զբաղվողները արտադրում են կաթ,միս, բուրդ, ձու , մեղր :

Երաշտ տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում:Խոտի և խտացված կերի անբավարարվածության պատճառով դժվարանում է անասունների ձմեռային շրջանի կազմակերպումը:

Դաշտամիջյան ճանապարհների վիճակը շատ անմխիթար է, որի պատճառով դժվարանում է անասնակերի և բերքի տեղափոխումը:

Համայնքի վարելահողերը ոռոգվում են 50% - ով.

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 1 հիմնական դպրոց, որը կառուցվել է 2004թ. սակայն այժմ գտնվում է շատ անմխիթար վիճակում:Դպրոցում սովորում է 20 աշակերտ , 10 ուսուցիչ, 4 տեխ. աշխատող: Մեկ ուսուցչին ընկնում է 2 աշակերտ:

## ՄՇԱԿՈՒՅԹ ,ՍՊՈՐՏ

Համայնքը չունի մշակույթի տուն , որի պատճառով զրկվում է հասարակական միջոցառումներից, կինոյից, թատրոնից:

Համայնքի գրադարանը գտնվում է գյուղապետարանի սենյակներից մեկում և ունի շուրջ 1108 գիրք, որոնք գտնվում են ոչ բարվոք վիճակում:

Սպորտ հրապարակ չունենալու պատճառով երիտասարդությունը զրկված է սպորտային խաղերից:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է մեկ բուժկետ, որը գտնվում է գյուղապետարանի սենյակներից մեկում: Բուժկետն ունի որոշակի գույք և մեկ բուժաշխատող:

## ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ/ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ,ԱՌԵՏՈՒՐ և ՍՊԱՍԱՐԿՈՒՄ/

Համայնքը չունի արդյունաբերական ձեռնարկություններ:
Համայնքի բնակիչները զբաղվում են անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, հողագործությամբ:
Համայնքն չունի առևտրի և սպասարկման օբյեկտներ:

## ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ,ԶԲՈՍԱՅԳԻ,ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ,ԲԱՑ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքը չունի հանգստի գոտիներ, զբոսայգիներ, մարզադաշտ,սակայն դպրոցի բակում կա մի փոքրիկ խաղահրապարակ, որը գտնվում է անբարվոք վիճակում:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ և ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համայնքը գտնվում է միջազգային մայրուղուց 7 կմ հեռավորության վրա:
- Համայնքում կա հեռախոսակապ և 2 հեռախոսակայան:
- Համայնքը ունի ուղղակիի ընտրություններով համայնքի ղեկավարի ընտրության հնարավորություն :
- Համայնքն ունի 5 ԲՈՒՀ- ի շրջանավարտ՝ տարբեր մասնագիտությունների:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Անմխիթար վիճակում են գտնվում համայնքի փողոցները և ճանապարհները:
- Համյնքը չ ունի խմելու ջրի ներհամայնքային համակարգ:
- Համայնքի առանձնատները գտնվում են վթարային վիճակում:
- Համայնքում կան շատ գործազուրկներ:
- Բնակչության 30 % - ից ավելին սոցիալապես անապահով են:
- Համայնքը վերաբնակեցված է հիմնականում փախստականներով,որոնք ունեն բնակարանային հիմնահարցեր:
- Համայնքում ծնելիությունը նվազել է՝ կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ:
- Գյուղացու եկամուտները նվազում են ոռոգման ներքին ցանց չունենալու պատճառով:
- Համայնքը գազաֆիկացված չէ:
-

## ՀԱՄԱՅՆՔԻՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Խմելու ջրի արտաքին ցանցի անմխիթար վիճակը /կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի ցանց կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների աղբյուր/:
- Ոռոգման ջրի ներքին ցանցի բացակայությունը:
- Համայնքի վթարային առանձնատների առկայությունը:
- Ոռոգման ջրավազանի վթարային վիճակը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի ղեկավարը հաշվի առնելով համայնքի բնակչության պահանջները, սահմանում է համայնքի զարգացման հետևյալ ռազմավարությունը՝ համայնքը դարձնել բարեկարգ, բարելավել բնակչության սոցիալ – տնտեսական,մշակութային և հանգստի պայմանները,համայնքը դարձնել գեղեցիկ , բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը:
Առաջիկա չորս տարիներին համայնքի հիմնական նպատակներն ու խնդիրներն են

- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների վերանորոգում, ասֆալտապատում
- Համայնքի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում և արտաքին ցանցի վերանորոգում
- Ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում
- Գյուղտեխնիկայի ձեռք բերում
- Համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը, հողագործությունը, անասնապահությունը, մեղվաբուծությունը
- Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը
- Համայնքի գազիֆիկացում
- Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում
- Կառուցել մշակույթի տուն
- Առանձնատների վերանորոգում
- Վարչական շենքի վերանորոգում/ դպրոց , գյուղապետարան, բուժկետ/
- Ջրանցքի կառուցում
- Կաթի մթերման կետի կառուցում

# ԾՐԱԳԻՐ 1

## ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

Ներածություն

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 8կմ, որից 7կմ կենտրոնական ճանապարհն է: Մայրուղուց մինչև գյուղ մտնող ճանապարհը կիսաասֆալտապատ է և գտնվում է խիստ անբարվոք վիճակում,որը դժվար և վտանգավոր իրավիճակներ է ստեղծում երթևեկության համար: Գյուղի երեխաները ուսումը շարունակում են Վայք քաղաքի ուսումնական հաստատություններում ճանապարհի անբարվոք վիճակը և անբարենպաստ եղանակները պատճառ են դառնում երեխաների ուսումնական ծրագրերից հետ մնալուն: Ոռոգման ջրագիծը կառուցելիս քանդվել է գյուղամիջյան ճանապարհը: Սույն ծրագրով առաջարկվում է ասֆալտապատել համայնքի կենտրոնական ճանապարհը և մյուս փողոցները:

Նպատակը

Ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ, տարվա բոլոր եղանակներին, վերացնել փողոցների բոլոր ջրափոսերը:

Խնդիրները

համագործակցել որևէ դոնոր կազմակերպության հետ և կազմել ծրագրի իրականացման նախագծա - նախահաշվային փաստաթղթեր, կատարել նախատեսել ասֆալտապատման կամ բետոնապատման աշխատանքներ: Ըստ նախնական հաշվարկի՝ շինարարական աշխատանքների համար կպահանջվի մոտ 650. մլն դրամ գումար :

# ԾՐԱԳԻՐ 2

# ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Ներածություն

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1940թվականին,ջրագծի երկարությունը կազմում է 1 կմ:

## ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Վերջին տարիներին տնտեսական անկման պատճառով շարքից դուրս են եկել մոտ 70 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագծերը:Համայնքի հրատապ խնդիրներից է խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի/2կմ/ կառուցումը և արտաքին ցանցի/1կմ/ վերանորոգումը:Սույն ծրագրով առաջարկվում է հիմնական վերանորոգման ենթարկել համայնքի ջրամատակարարման ցանցը:

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակները

- Ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով
- Նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները
- կանխել կեղտաջրերի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները
- Բարելավել համայնքի բնակիչների սոցիալ- տնտեսական պայմանները

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր հիմնախնդիրներ

- Կնքել պայմանագիր Հայաստանի Սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ, որի համաձայն ,ծրագրով պահանջվող գումարի
- 70 % -- ը կհատկացվի հիմնադրամի կողմից, իսկ 30% -- ը համայնքի բյուջեից և համայնքի ներդրումներից
- կազմել ծրագրի իրականացման նախագծա - նախահաշվային փաստաթղթերը
- հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքներն իրականացնող կապալառու շին կազմակերպություն
- ձեռքբերել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ

- կազմել ՕԻԳ համայնքի անդամներից կատարվող աշխատանքները վերահսկելու համար

## ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը համայնքը 100 % -- ով կապահովվի շուրջօրյա խմելու ջրով ,կնվազի խմելու ջրի կորուստները ,ներկայիս 30 - 40% - ից հասնելով 0 % - ի: կբարելավի համայնքի ազգաբնակչության սոցիալ – տնտեսական պայմանները:

## ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախնական մոտավոր հաշվարկներով 1 կմ երկարությամբ ջրագծի վերանորոգման և 2կմ ներքին ցանցի կառուցման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 10 մլն.դրամ:

## ԾՐԱԳԻՐ 3

## ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԾԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նպատակ

Կանոնավոր ոռոգել սեփականաշնորհված և տնամերձ հողամասերը և բարձրացնել դաշտավարության բերքատվությունը:

Խնդիր 1

Տնամերձ հողամասերի 17 հա հողերի ոռոգման համար կառուցել ոռոգման ներքին ցանց ՝ օգտագործելով 10 կմ երկարությամբ 100 մմ տրամագծով խողովակներ և 2 կմ երկարության բետոնյա ջրատար առուներ, որի համար կպահանջվի 50 մլն դրամ գումար: Աշխատանքները կատարվելու են «Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի»միջոցների հաշվին:

## Ծրագիր 4

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նպատակ

Վերանորոգել վթարային վիճակում գտնվող առանձնատները և բնակարանով ապահովել անօթևան փախստական ընտանիքներին:

Խնդիր

Դիմել ՀՀ Կառավարության առընթեր միգրացիայի և փախստականների պետական կոմիտեին `կառուցելու 15 առանձնատներ և տրամադրելու անօթևան փախստական ընտանիքներին ,վերանորոգել վթարային վիճակում գտնվող առանձնատները:
Ըստ նախնական հաշվարկի` շինարարական աշխատանքների համար կպահանջվի մոտ 100. մլն դրամ գումար :

## ԾՐԱԳԻՐ 5

## ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Նպատակ

Համայնքի դաշտամիջյան ճանապարհները դարձնել երթևեկելի տրանսպորտային միջոցների , գյուղատնտեսական մեքենաների և մեխանիզմների համար:

Խնդիր 1
Հարթեցնել և խճապատել սար տանող ճանապարհահատվածը:

Խնդիր 2

Հարթեցնել և խճապատել գյուղից ներքև գտնվող հանդամասերի ճանապարհահատվածները:
Ծրագիրը իրականացնելու համար համայնքի 2013թ. բյուջեում նախատեսել 500.հազ. դրամ:

# ԾՐԱԳԻՐ 6

## ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱԶԻՖԻԿԱՑՈՒՄ

Նպատակ
Բարելավել համայնքի բնակչության կենցաղային պայմանները:

Խնդիր 1
Մինչև 2013թ. մայիսի 1 – ը ձեռք բերել մարզպետարանի աջակցությունը համայնքի գազիֆիկացման աշխատանքները կազմակերպելու համար:
Պատասխանատու՝ գյուղապետ

Խնդիր 2
Մինչև 2013թ. հունիսի 1 – ը կազմակերպել բնակչության ներդրման հարցը՝ գազիֆիկացման աշխատանքները սկսելու համար:
Պատասխանատու՝ գյուղապետ

Խնդիր 3
Մինչև 2013թ հոկտեմբերի 1 – ը բնակարաններում տեղադրել գազի հաշվիչներ:

Պատասխանատու՝ գյուղապետ

Խնդիր 4
Մինչև 2014թ. հունվարի 1 – ը շահագործել գազի մատակարարումը:

Պատասխանատու՝ գյուղապետ

## ԾՐԱԳԻՐ 7

### ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ /ԴՊՐՈՑ ,ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ,ԳՐԱԴԱՐԱՆ/ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նպատակ
Աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը,համայնքի վարչական շենքը դարձնել բարեկարգ:

Խնդիր 1
Մինչև 2014թ. տարեվերջ կառուցել մշակույթի տուն:Այդ նպատակով համայնքի 2014թ. բյուջեում նախատեսել կառուցման ծախսի 10% - ը:

Խնդիր 2
Վերանորոգել համայնքի վարչական շենքը:Այդ նպատակով 2014թ. համայնքի բյուջեում նախատեսել 500.0 հազ. դրամ:
Խնդիր 3
Համայնքի վարչական շենքի սենյակներից մեկում գտնվում է գրադարանը:
Գրադարանի գրքային ֆոնդը և համապատասխան գույք ձեռք բերելու համար համայնքի 2015 թ. բյուջեում նախատեսել 200.0 հազ. դրամ:

հավելված 2

## ՋԵՂԵԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ

## ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

- բուժկետ
- խմելու ջրի արտաքին ցանց
- վարչական շենք
- գյուղ տեխնիկա և գործիքներ
- գերեզմանատուն
- ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ